ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/6573-2024
«31» 07 2024թ.

**«ԲԻ ԷՍ ՍԻ» ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**
(էլ. փոստ: bsc@bsc.am, samvel@bsc.am, development@bsc.am, marketing@bsc.am)

Հարգելի՛ պարոն Գևորգյան,

«Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Բի Էս Սի» բիզնեսի աջակցման կենտրոն» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 2023 թվականի հուլիսի 29-ին կնքված ԲՏԱՆ-ԴՄ-2023/03 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետով Ընկերությունը պարտավորվել է ծրագիրն իրականացնել՝ ներգրավելով դասընթացի/դասընթացների 500 մասնակցի՝ համաձայն պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված միջոցառումների և 5-րդ հավելվածով սահմանված ծրագրի:

Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու վերաբերյալ Կազմակերպության կողմից Նախարարություն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ փաստաթղթերը պատշաճ չեն ու չեն համապատասխանում Պայմանագրով Կազմակերպության ստանձնած և վերջինիս կողմից կատարման ենթակա պարտավորության պայմաններին (մասնավորապես՝ դասընթացներին ներգրավված մասնակիցներից առնվազն 50 %-ի՝ 250 մասնակցի վերաբերյալ չի ներկայացրել վերջիններիս վերաբերյալ աշխատանքի անցնելու կամ աշխատանքային առաջընթաց գրանցած լինելու հիմքով վերջիններիս հետ կնքված այնպիսի աշխատանքային պայմանագրեր, որոնք կհամապատասխանեին կողմերի միջև

կնքված Պայմանագրի պահանջներին), ինչը թույլ է տալիս փաստելու, որ Կազմակերպությունը չի կատարել Պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Պայմանագրի 2.1.3. կետով հստակ նշված են սույն պայմանագիրը լուծելու հիմքերը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Նախարարությունը հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի գ) ենթակետի դրույթները՝ 2024 թվականի հուլիսի 31-ից միակողմանի լուծում է հիշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Բի Էս Սի» բիզնեսի աջակցման կենտրոն» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել 19,079,172 (տասնինը միլիոն յոթանասունինը հազար հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ կանխավճարը և նույն ժամկետներում «900005028106» հաշվեհամարին վճարել տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով, որը կազմում է 476,979 (Չորս հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ գումար:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի 1937-Ն որոշման՝ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի նախարարության պաշտոնական կայքում:

Միաժամանակ նույն որոշման հավելվածի 9.1 և 9.2 կետերի համաձայն.

Դրամաշնորհի մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն կազմակերպությունները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում (այսուհետ՝ ցուցակ): Կազմակերպությունն ընդգրկվում է ցուցակում, եթե՝

1) որպես հաղթող հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է կնքված պայմանագրով սահմանված պարտավորություն, որը հանգեցրել է պետական մարմնի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ցուցակը հրապարակում է ՀՀ ֆինանսների նախարարությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում: Կազմակերպությանը ներառում է ցուցակում պետական մարմնի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, այն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, սույն կետով նախատեսված պատճառաբանված որոշումը պետական մարմնի ղեկավարը կայացնում և ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն սույն կարգի 9.1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված

պայմանի դեպքում՝ մրցույթը չկայացած հայտարարելու օրվան, իսկ 2-րդ ենթակետով սահմանված պայմանի դեպքում՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակելուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կազմակերպությունը ցուցակում ներառվում է մեկ տարի ժամկետով:

7/31/2024

X

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GASPARYAN DAVIT 1407810154 **ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գնումների բաժին
010 59 00 47